Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. Պ. ԿԵՆՏ. ԿՈՒՐՍԵՐԻ

# ՀԱՐՑԱՑՈՒՑԱԿՆԵՐ ԳՐՈՆԵՐԱԿԱՆ ՑԻԿԼԻ

(ՆՎԵՐ ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻՆ)

ԼԵՆԻՆԱԿԱՆ

Պետհրատի IV տպարան

338-Լ49-Դ

Գրանեքլար № 625 Պատ. № 177 Տիրաժ 100

Ա92
338

# ՀԱՐՑԱՑՈՒՑԱԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչի մեր կազմակերպությունը Լենինի անունն է կրում։

2. Ինչպես պետք է կազմվեն ողակները։

3. Ինչու ողակները կազմվում են 10 հոգուց, և ինչու ողակավարը ու փոխողակավարը ընտրվում են։

4. Ճիշտ է, որ Հոկտեմբերիկների խմբակը պետք է լինի կոլլեկտիվին կից։

5. «Ա» կետի հիմնավորումը։

6. Ինչու հիմնական բջիջը—կոլլեկտիվը 40—50 հոգի յե։

7. Ինչու կոլլեկտիվը հիմնականում կազմակերպվում է բջիջին կից և ոչ թե դպրոցի։

8. Ինչու կոլվարը չի ընտրվում, այլ նշանակվում է և այն էլ ԼԿՅԵՄ բջիջի կողմից։

9. Ինչու կոլլեկտիվի գլուխ կանգնած է խորհուրդը և ոչ թե միայն կոլվարը։

10. Ինչպիսի կոմիսիաներ պետք է լինեն կոլլեկտիվին կից։

11. Որ հասակը ավելի լավ է ընդգրկել պիոներական կազմակերպության մեջ և ինչու։

12. Ով է կանգնած հոկտեմբերիկների խմբակի գլուխը և ով է ղեկավարում նրա աշխատանքները։

13. Ինչու կոլեկտիվները համախմբվում են շըր-ջանային, գավառային, հանրապետական, համամիութենական կազմակերպությունների մեջ։

14. Ինչու բյուրոները կազմվում են ԼԿՅԵՄ կոմիտեներում, վերջիններիս բաժնի իրավունքներով։

15. Ումից ավելի լավ է կազմել բյուրո և ինչի։

16. Ով պետք է լինի պիոներական բյուրոյի նախագահը։

17. Պիոներական օրենքների և սովորությունների հիմնավորումը։

18. Ինչու համար հարկավոր է հանդիսավոր խոստումը։

19. Հոկտեմբերիկների օրենքների և սովորությունների հիմնավորումը։

20. Պիոներական նշանի հիմնավորումը։

21. Ինչի համար է հարկավոր զգեստ և վզկապը, նրանց կարևորության հիմնավորումը։

## ՊԻՈՆԵՐՆԵՐԸ ՅԵՎ ԽՐՃԻԹ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ.

1. Ինչով և վոնց կարող ենք ոգնել խրճիթ ընթերցարանի վարիչին, խրճիթի մաքրության ու կարգապահության գործում։

2. Ինչում կարող է արտահայտվել պիոների ոգնությունը, խրճիթ-ընթերցարանի տեղեկատու աշխատանքներում։

3. Ինչ և վոնց կարող են անել պիոներները խրճիթի գրքերն չփչանալու և պահպանելու գործում։

4. Ինչով կարող են ոգնել պիոներները, խրճիթում կազմակերպվող գյուղացիների հավաքույթներին և տոներին։

5. Կարելի յե պիոների միջոցով կապել խրճիթ-ընթերցարանը ընտանիքի հետ և ինչպես այդ անել։

6. Հարկավոր է արդյոք պիոներների ուժերով կազմակերպել ընթերցումներ գյուղացիների համար և ինչպես

7. Ինչպես գյուղ-կոլեկտիվը պետք է կազմակերպվի մշտական ագիտացիա գյուղական թերթի համար (Մաճկալ)։

8. Ինչպիսի աշխատանքներ կարելի կլինի հանձնարարել պիոներներին խրճիթում ամառվա ընթացքում։

9. Ով և ինչպես է ղեկավարում կոլեկտիվի աշխատանքները խրճիթում։

10. Ինչպիսի ոգնություն կարող է ցույց տալ խրճիթ-ընթերցարանը պիոներական կոլեկտիվին։

11 Ինչ կարող են անել պիոներները, յեթե գյուղում չկա խրճիթ-ընթերցարան։

## ՊԻՈՆԵՐԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1. Հարկավոր է արդյոք պիոներների մեջ ստեղծել առանձին գյուղատնտեսական խմբակներ և ինչու։

2. Հարկավոր է պիոներներին մտնել Կոմյերիտմիության բջիջներին կից գյուղատնտես. խմբակները։

3. Վոր հասակից և ինչու յե հարկավոր պիոներներին ընդունել գյուղյերիտ դպրոցները։

4. Հարկավոր է արդյոք պիոներներին ունենալ

առանձին բանջարարոցներ, վորտեղ և ինչպես փորել հողամասը, ինչ ցանել այդտեղ, վորտեղից բերել սերմացուն և գործիքները: Ինչպես կազմակերպել բանջարանոցի խնամքը: Ինչ անել բերքը:

5. Ինչից սկսել և ինչպես տանել ամբողջ պիոներ կոլլեկտիվով պայքար պտղի, բանջարանոցի, այգու վնասատուների դեմ:

6. Ինչպես սկսել և ինչպիսի աշխատանք տանել պիոներ կոլլեկտիվում ձին, կամ կովը ճիշտ խնամելու համար թե տանը և թե դաշտում:

7. Ինչ կարող է անել պիոներ կոլլեկտիվը սերմացուն մաքրելու գործում:

8. Ինչ կարող են անել պիոներները հասարակական և գյուղին պատկանող գործիքները խնամելու գործում:

9. Հարկավոր է արդյոք պիոներ կոլլեկտիվին զբաղվել թռչուններ, խողեր, նապաստակներ պահելով: Ինչպես սկսել և ինչպես տանել այդ աշխատանքը:

10. Հարկավոր է արդյոք պիոներ կոլլեկտիվին տանել աշխատանք ծառերը խնամելու գործում:

11. Հարկավոր է արդյոք պիոներների գյուղատնտեսական աշխատանքի ընթացքում ոգնություն կանչել գյուղատնտեսին, անասնագործին:

12. Ինչպիսի հասարակական աշխատանքների կարող են մասնակից լինել պիոներները գյուղում և ինչպես այն տանել կազմակերպված ձևով:

13. Հարկավոր է արդյոք պիոներ կոլլեկտիվին ունենալ արհեստանոցներ գյուղում և ինչպես կազմակերպել այդ:

# ՄԱՍԱՅԱԿԱՆ ՔԱՂԼՈՒՍ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԵԾԵՐԻ ՅԵՎ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՄԵՋ

*1. Ի՞նչ կարող են անել պիոներները գյուղական հավաքույթում։*

*2. Ի՞նչ աշխատանք կարող են կատարել պիոներները հնձի ժամանակ։*

*3. Ի՞նչ կարող են անել պիոներները նախազորակոչյալներին կանչելիս։*

*4. Ի՞նչ աշխատանք կըկարողանան տանել պիոներները ամառվա ընթացքում, յերեկոները մեծերի մեջ, վորոնք հավաքվում են մի վորոշ տեղ զրույց անելու։*

*5. Ի՞նչպիսի աշխատանք կկարողանան տանել պիոներները փոքրահասակ բատրակների, աղջիկ դայակների մեջ։*

*6. Ի՞նչ նշանակություն ունի այս բոլոր աշխատանքները գյուղի համար։*

# ՊԻՈՆԵՐՆԵՐԸ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

*1. Մատնանշեք կոնկրետ կերպով պիոներների մասնակցությունը հասարակական կազմակերպությունների աշխատանքներում հետևյալ կետերով։*

*1) Պիոներները և գյուղ խորհուրդը.*
*2) Պիոներները և Փոխօգկոմը.*
*3) Պիոներները և Լիկկայանները.*
*4) Պիոներները և տեղական կոոպերատիվները.*
*5) Պիոներները և չայչիխանները.*

6) Պիոներները և գյուղատնտեսական վարկի կամպանյան.

7) Պիոներները և կամպանյան վնասատուների դեմ։

## ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԱՇԽԱՏՄՆՔԸ ԴՊՐՈՑՈՒՄ

1) Ինչու պիոներական կոլեկտիվը իրեն աշխատանքների ընթացքում չի կարող անցնել դպրոցի կողքով։

2) Ֆորպոստի խնդիրները և նրա կազմակերպումը (յե՞րբ, վորտե՞ղ, ումից, ի՞նչպես)։

3) Ֆորպոստը դպրոցական խորհուրդ և դպրոցի վարիչը։

4) Ֆորպոստը և աշակերտական ընդհանուր ժողովը։

5) Ֆորպոստը և դպրոցական կրուժոկները, կոմիսիաները։

6) Ֆորպոստը և կամպանիաները, պատի լրագիրը, ընթերցարանը և այլն։

7) Ֆորպոստը և դպրոցի կապը շրջապատող հասարակական կյանքի հետ։

8) Պիոներ դպրոցականները և նրանց վերաբերմունքը ուսմանը։

9) Ֆորպոստը և դպրոցականների տնտեսական դրությունը։

10) Կոնֆլիկտները, պիոներ աշխատանքների ընթացքում դպրոցում և նրանց լուծումը։

11) Ֆորպոստի աշխատանքների ղեկավարությունը կոլեկտիվի, Գավբյուրոյի կողմից։

# ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՍՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿՈՄԲՋԻՋԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

*1) Հարկավոր է արդյոք պիոներների ոգնությունը կոմյերիտմիության աշխատանքներին։*

*2. Ինչպես կազմակերպել պիոներների հաճախումը կոմյերիտմիության բջիջի ժողովներին։*

*3) Ի՞նչ կարող են անել պիոներները կոմյերիտմիության կողմից կազմակերպված մի վորևե աշխատանքային կիրակնորյակին։*

*4) Ի՞նչ կարող են անել պիոներները կոմսոմոլի և կուսակցության նախաձեռնած կամպանիաների անցկացման գործում։*

*5. Ի՞նչ մասնակցություն կարող են ունենալ պիոներները կուսակցության և ԼԿՅԵՄ կողմից տարվող ագիտացիային կոոպերացիայի համար։*

*6) Ցույց տվեք նաև ուրիշ որինակներ կոմսոմոլին և կոմկուսին ոգնելու գործում։*

*7) Ինչպե՞ս ապահովել մշտական ոգնությունը կոմյերիտմիության և կոմկուսի աշխատանքներին։*

# ՊԻՈՆԵՐՆԵՐԸ ՅԵՎ ՈՒՍՈՒՑԻՉԸ

*1. Կարող է ուսուցիչը լինել կուլվար և ինչու։*

*2. Ինչու չի պետք ուսուցիչի համագործակցությունը պիոներների հետ։*

*3. Կարող է կոմյերիտական ուսուցիչը լինել կուլվար։*

4. Հարկավոր է ուսուցիչին իմանալ պիոներական շարժումը, նրա աշխատանքները և ինչ միջոցներով անել այդ։

5. Ինչով և ինչպես կարող է օգնել ուսուցիչը կոլլեկտիվի հասարակական, քաղաքական աշխատանքներին։

6. Ինչով կարող է օգնել ուսուցիչը անհատապես կոլվարին, կոլլեկտիվի խորհրդին, ողակային և կոլլեկտիվի հավաքույթներին։

7. Հարկավոր է արդյոք ուսուցչին մտցնել կոլլեկ. խորհրդի մեջ վճռական ձայնի իրավունքով։

8. Պետք է արդյոք ուսուցիչը կոլվարին ծանոթացնի դպրոցի աշխատանքներին և ինչպես այդ անել։

9. Ինչպես է հարկավոր պիոներներին և կոլվարին վերաբերվել ուսուցչի անձնական կյանքին։

10. Հարկավոր է և վոնց պայքարել մի քանի ուսուցիչների հին սովորությունների դեմ, ծեծ-պատիժ և այլն։

11. Գրեք կոնկրետ կերպով, վոնց են վերաբերվում պիոներները ուսուցիչների հետ և ուսուցչության վերաբերմունքը հանդեպ պիոներների։

## ԴՊՐՈՑԻ ՅԵՎ ՊԻՈՆԵՐ· ՇԱՐԺՄԱՆ ՇԱՂԿԱՊՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Ինչ կա ընդհանուր պիոներական շարժման և դպրոցի մեջ։

2. Ինչպիսի տարբերություն կա դպրոցի և պիոներական շարժման մեջ։

3. Ինչու չի պետք շաղկապումը դպրոցի և պիոներական կազմակերպության միջև։

4. Վորոնք են պիոներական կազմակերպության և դպրոցի շաղկապման հիմնական գծերը։

5. Ինչպես պետք է լինի ուսուցիչի և կոլվարի փոխհարաբերությունը։

6. Ինչ է անհրաժեշտ անել դպրոցական գծով, դպրոցական յերեխաների ծանրաբեռնումը վոչնչացնելու համար։

7. Տվեք ձեր կարծիքը-քանի ժամ կարող են յերեխաները պարապել դպրոցում, քանի ժամ պիոներական կազմակերպության մեջ, ինչքան տնային աշխատանքների համար և քանի ժամ պետք է հանգստանան։

8. Ինչպես շաղկապել մի վորևե կամպանիայի անցկացումը, յենթադրենք հոկտեմբերյան հեղափոխությունը դպրոցում և պիոներ կոլեկտիվում։

## ՊԻՈՆԵՐՆԵՐԸ ՅԵՎ ԸՆՏԱՆԻՔԸ

1. Ինչ նշանակություն ունի պիոների աշխատանքը ընտանիքում։

2. Ինչում կարող է արտահայտվել պիոների օգնությունը ընտանիքում տնտեսական, կուլտուրական աշխատանքներում։

3. Բացի այդ, էլ ինչ կարող է անել պիոները ընտանիքում։

4. Ինչպես պիոներական կոլեկտիվը և պիոներները պետք է տանեն այդ աշխատանքը ընտանիքում։

5. Ինչպիսի դժվարությունների կարող են հանդիպել պիոներները ընտանիքում աշխատանք տանելու դեպքում և ինչպես է հարկավոր դրանց դեմ կռվել։

6. Ինչպիսի կազմակերպությունների հետ և ինչ-

պես է հարկավոր սերտ կապվել, վորպեսզի հաջողությամբ տանել աշխատանք ընտանիքում։

7. Հարկավոր է ծնողական առանձին հավաքույթներ հրավիրել և ինչո՞ւ։ Ինչ է հարկավոր այդ հավաքույթներում անել և ում կարելի կլինի ոգնության կանչել այդ աշխատանքին։

## ԱՇԽԱՏԱՆՔ ԱՆԱՊԱՍՏԱՆՆԵՐԻ ՄԵՋ

1. Ինչպես կոլլեկտիվով ուսումնասիրել անկազմակերպ յերեխաներին, անապաստաններին։

2. Ինչ են ամենից շատ սիրում այդ յերեխաները անել։

3. Ինչպիսի աշխատանք կարելի յե տանել նրանց հետ։

4. Կոլլեկտիվի վոր աշխատանքներին կարելի յե նրանց մասնակից անել։

5. Ինչ փոխհարաբերություն պետք է լինի պիոներների և անապաստանների մեջ։

6. Կարող է արդյոք կոլլեկտիվը ցույց տալ անապաստաններին տնտեսական ոգնություն։

7. Ինչից է առաջ գալիս անապաստանությունը և ինչպես դրա առաջը առնել։

## ԶՐՈՒՅՑԸ ԳՅՈՒՂ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ.

1. Ինչպիսի նշանակություն ունի զրույցը պիոներական կոլլեկտիվում։
2. Ո՞վ ինչի մասին է անում զրույց կոլլեկտիվի հավաքույթում։
3. Ո՞վ յեվ ինչի մասին է անում զրույց ողակի հավաքույթում։

4. Ինչպե՞ս է ինքը գրույցի ղեկավարը պատրաստվում գրույցին։
5. Ինչպես է կատարվում պլանների պատրաստությունը գրույցին։
6. Ինչի՞ց սկսել գրույցը կոլեկտիվի հավաքույթում։
7. Ինչպիսի միջոցներով է ամրացվում գրույցը։
8. Ո՞վ և ինչպե՞ս կարող է օգնել կոլեկտիվում գրույցը անցկացնելու գործում։
9. Նշեք յերկու գրույց, վորը պետք է անի կոլվարը յեվ գրույցի կոնսպեկտը։
10. Ինչպիսի՞ տեղ է բռնում գրույցը պլաներական սիստեմայի մեջ։
11. Ինչ՞ բան է գրույցը։
12. Կարելի յե կազմել տարվա ծրագիր գրույցների համար։
13. Ինչպիսի մեթոդական ցուցմունքներ կարող եք տալ գրույց անցկացնելու համար։
14. Հավաքույթի վո՞ր ժամին է նպատակահարմար սկսել գրույցը։
15. Ով է կազմում գրույցի ծրագիրը և բովանդակությունը։
16. Ինչո՞վ և ինչպես կարելի կլինի պատկերավորել գրույցը։

## ՊԱՏԻ ԼՐԱԳԻՐԸ ԳՅՈՒՂ ԿՈԼԼԵԿՏԻՎՈՒՄ

1. Ինչպիսի՞ նշանակություն ունի պատի լրագիրը գյուղ կոլլեկտիվում։

2. Ինչպիսի պատի լրագիր ունենալ Միացյալ գպրոցի կամ կոմյերիտմիության բջիջների հետ, թե՞ առանձին և ինչո՞ւ։

3. Յե՞րբ և ինչպե՞ս է կազմակերպվում պատի լրագրի գործը կոլլեկտիվում։

4. Ո՞վ է լույս ընծայում պատի լրագիրը կոլլեկտիվում։

5. Ումի՞ց և ինչքա՞ն ժամանակով է ընտրվում խմբկոլը և ինչպե՞ս է նա իր մեջ բաժանում աշխատանքը։

6. Ինչպիսի՞ չափ պետք է ունենա պատի լրագիրը և ինչո՞ւ։

7. Ինչքա՞ն ժամանակամիջոցում պետք է լույս տեսնի թերթը և ինչո՞ւ։

8. Ի՞նչ նշանակություն ունի վերնագլուխը պատի լրագրի համար։

9. Ինչպե՞ս է հարկավոր գրել թերթը ձեռագրով, տպագրով, և ռեժեգատոնով և այլն։

10. Ինչպիսի՞ գլխավոր բաժիններ պետք է լինի լրագրում, մանրամասն նշեք թե ի՞նչ պետք է տեղավորել ամեն մի բաժնում։ Գծեցեք պատի լրագրի սըխեմաներ (բաժիններով ամեն ինչով)։

11. Ո՞վ և ինչպե՞ս է կազմում հերթական № ծըրագիրը։

12. Ինչպե՞ս է հավաքվում պատի լրագրի նյութերը (մանրամասն նկարագրել)։

13. Ինչպես պետք է լինի լրագրի արտաքինը և ի՞նչ նշանակություն ունի այդ։

14. Ինչպես քաշել ու մասնակից անել բոլոր պիոներներին պատի լրագրի աշխատանքներին։

15. Հարկավոր է՞ և վորտե՞ղ փակցնել պատի լըրագիրը պիոներները և մեծերը կարդալու համար։

16. Ի՞նչ և վոնց է հարկավոր գրել տեղերից «Պիոներ» հանդեսին, «Պիոներ դեկին» և «Ավանգարդին»։

17. Ովքե՞ր են պատկորները։

18. Հարկավոր է ստեղծել պատկորների առանձին կրուժոկներ։

19. Հարկավոր են պատկոմնական բյուրոներ և ինչո՞ւ։

## ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1) Ինտերնացիոնալ դաստիարակության նշանակությունը։

2) Պիոներները և ՄՈՊՐ-ը։

3)Պիոներները և կապը արևմուտքի պատ. խըմբակների հետ։

4) Կապը ազգային փոքրամասնությունների կոլեկտիվների հետ։

5) Թվեք նաև ուրիշ ձևեր ինտերնացիոնալ դաստիարակման համար։

## ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1) Ինչպես է թունավորվում ընտանիքում և հին դպրոցում պատանու գիտակցությունն ու զգացմունքները կրոնական պրոպագանդայով։

2) Պայքարի ինչպիսի կոնկրետ փաստերը նոր կենցաղի համար կարելի յե և պետք է կապել հակակրոնական պրոպագանդայի հետ։

3) Ինչպես մոտենալ մի վորևէ կոնֆլիկտ հարթելու

ընտանիքի և կոլեկտիվի միջև բղխած պիոների հակակրոնական աշխատանքներից տանը։

4) Կոլվարի դերը պիոներների հակակրոնական դաստիարակության խնդրում, նրա աշխատանքն իրեն վրա։

5) Ի՞նչ ե հարկավոր անել պիոներներին յեկեղեցական տոներին։

6) Կարելի՞ յե արդյոք ծաղրել տերտերին, հավատացյալներին։

7) Կարող ե արդյոք պիոները գնալ յեկեղեցի և խաչ կախել վզից, յեթե ստիպում են նրան ծնողները։

## ՖԻԶԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1) Ինչպիսի տեղ ե բռնում պիոներ կոլեկ. աշխատանքների մեջ ֆիզդաստիարակությունը։

2) Ինչպես ենք մենք հասկանում թե ինչ բան ե ֆիզդաստիարակությունը պիոներների մեջ։

3) Ինչպիսի՞ մասերի կարելի՞ յե բաժանել ֆիզդաստիարակությունը կոլեկտիվում։

4) Ո՞վ, վորտե՞ղ և ինչպե՞ս ե տանում ֆիզ. դաստ. պարապմունքները գյուղ կոլեկտիվում։

5) Ի՞նչ ե հարկավոր նկատի ունենալ ֆիզպարապմունքների ծրագիրը մշակելիս։

6) Կազմեք ֆիզ. պարապմունքի որինակելի ծրագիր պիոներական կոլեկտիվի համար։

7) Ինչպիսի՞ տեղ ե բռնում պիոներների մոտ ֆիզդաստիարակության մեջ խաղերը։

8) Ինչպիսի՞ խաղի տեսակներ դուք կառաջարկեյիք անցկացնել պիոներների մեջ։

9) Ինչպես կատարել կոլլեկտիվում պիոներների ֆիզ-զարգացման հաշվեառումը:

10) Ի՞նչ և ինչպե՞ս կարող են անցկացնել պիոներներն ընտանիքում և գյուղում առողջապահությունից:

11) Ի՞նչ կարող են անցկացնել պիոներները դպրոցում առողջապահությունից:

12) Մշակեք տասը օրենք առողջապահությունից, մաքրությունից և ֆիզ. կուլտից:

## ԿԱՄՊԱՆԻԱՆԵՐԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՆՐԱՆՑ ԱՆՑԿԱՑՆԵԼ

1. Բոլոր կամպանիաները արդյո՞ք տեղ պետք է բռնեն կոլլեկտիվի աշխատանքների մեջ, յեթե վոչ, ապա ի՞նչպիսիները,

2. Ի՞նչպիսի կապ կարող է լինել պիոներների աշխատանքների և կամպանիաների միջև:

3. Ի՞նչպիսի պակասություններ են ունեցել պիոներները կամպանիաներն անցկացնելիս:

4. Ինչպես պետք է պատրաստվել կոլլեկտիվում կամպանիաներին:

5. Ինչպես պետքէ ամրացվեն կոլլեկտիվում անցկացրված կամպանիաները:

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿՆԵՐԻ ՄՈՏ

1. Ինչու՞ չի անհրաժեշտ ընդգրկել հոկտեմբերիկների հասակ ունեցող յերեխաներին:

2. Ի՞նչպիսի հատկություններ ունեն 7-ից 11 տարեկան յերեխաները։

3. Հոկտեմբերի խմբակի ղեկավարի դերը։

4. Ամենից շատ ի՞նչ են սիրում անել հոկտեմբերիկները։

5. Պիոներները և հոկտեմբերիկները (նրանց փոխարաբերությունը)։

6. Բովանդակությունը և աշխատանքի ձևերը հոկտեմբերիկների հետ։

## ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՊԻՈՆԵՐ ԿՈԼԼԵԿՏԻՎՈՒՄ

1. Ի՞նչի յե պետք կոլլեկտիվ ընթերցումը կոլլեկտիվին։

2. Հարկավոր է և ի՞նչի մասին գրքեր կարդալ կոլլեկտիվի հավաքույթում.

3. Ի՞նչի մասին է հարկավոր ողակների հավաքույթներում։

4. Ո՞վ պետք է անցկացնի ընթերցումն ողակներում։

5. Հարկավո՞ր է արդյոք պիոներներին կարդալ գյուղական թերթեր («Մաճկալ» և այլն)։

6. Հարկավո՞ր է պիոներներին գրքեր վերցնել տանը կարդալու համար։

7. Վո՞րտեղից վերցնել այդ գրքերը։

8. Ինչով կարող է օգնել խրճիթ-ընթերցարանի վարիչը և ուսուցիչը կոլլեկտիվի ընթերցման գործում։

9. Հարկավո՞ր է կազմակերպել ընթերցումներ անկազմակերպ յերեխաների համար և ինչպես։

10. Ի՞նչպես օգտագործել «Պիոներ Դեկ»-ը կոլլեկտիվի հիվանդագին խնդիրները լուծելու համար։

# ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈԼԼԵԿՏԻՎՈՒՄ

1. Վորտեղ և ինչպես ճարել գյուղում պիոներների համար սենյակ։

2. Վորտեղ և ինչպիսի կահավորում ճարել ակումբի համար։ (Սեղան, նստարան և այլն)։

3. Ինչպես և ինչով զարդարել ակումբը թե դըրսից և թե ներսից (ինչպիսի անկյուն, պլակատներ և լոզունգներ)։

4. Ինչպես և ինչից անել լոզունգներ և պլակատներ։

5. Կազմեցեք տասը որինակելի լոզունգներ։

6. Գյուղում ինչպիսի որերին և վոր ժամերին պետք է բաց լինի ակումբը։

7. Ո՞վ է ղեկավարում ակումբի աշխատանքները, (կարգ, հերթապահություն և այլն)։

8. Ինչպիսի մասնակցություն են ցույց տալիս գյուղացիք և կոմյերիտականներն ակումբի կյանքին։

9. Ի՞նչպես է աշխատում ակումբն ամառվա ընթացքում։

10. Վորտեղից և ինչպիսի տնտեսական ոգնություն է ստանում պիոներական ակումբը գյուղում։

11. Ինչպիսի մասնակցություն են ցույց տալիս ակումբի կյանքին անկազմակերպ յերեխաները,

12. Ի՞նչպես և ինչով է ոգնում Գավբյուրոն ակումբի աշխատանքներում։

13. Ինչպիսի խնդիրներ ունի ակումբը գյուղական պիոներ կոլլեկտիվի աշխատանքներին և արդյոք կարիք կա ունենալ առանձին ակումբ գյուղի կոլլեկտիվին։

# ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՊԻՈՆԵՐ ԿՈԼԼԵԿՏԻՎՈՒՄ

1. Ինչպիսի սահմաններում պետքե տարվի կրթական աշխատանքները կոլլեկտիվում։

2. Ինչպիսի ձևեր դպրոցական, կրթական աշխատանքներին, անհրաժեշտ են ու հնարավոր պիոներ, կոլլեկտիվում։

3. Ինչպիսի ճանապարհներով. հնարավոր է վերացնել անգրագիտությունը, գյուղ պիոներների և շրջապատող պատանիների միջից, պիոներ՝ կազմակերպության ուժերով։

4. Ինչպես պիոներ կոլլեկտիվը կարող կլինի օգնել դպրոցում, դասերից հետ մնացող պիոներներին (կազմակերպչական ձևերը, մեթոդները)։

5. Ինչպիսի էկսկուրսիաներ է հարկավոր կազմակերպել կոլլեկտիվին, կրթական նպատակով։

6. Ինչպես պատրաստվել էկսկուրսիաներին։

7. Նկարագրեք մի փորձ է էկսկուրսիայի անցկացումը։

8. Ինչպես է հարկավոր ամրացնել էկսկուրսիաները։

9. Ում է հարկավոր, օգնության հրավիրել կրթական աշխատանքներին կոլլեկտիվում, և ինչպես այդ անել։

# ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՔԱՂԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

1. Ինչպիսի քաղաքական պատրաստություն մոտավորապես պետք է ձեռք բերեն պիոներները, պի-

ռներական կազմակերպության մեջ գտնված ժամանակամիջոցում (2-3 տարվա ընթացքում)։

2. Ինչ ձևերով է հնարավոր և անհրաժեշտ քաղդաստիարակությունը պիոներների մեջ։

3. Հարկավոր են արդյոք առանձին խմբակներ, պիոներներին կոմ. յերիտ. մյության համար պատրաստելու, յև թե վոչ, ապա ինչ ձևերով տանել այդ պատրաստությունը։

4. Վորտեղ և ինչպես պետք է տանան քաղդաստիարակությունը, պիոներ կոմյերիտականները։

## ԿՈԼԼԵԿՏԻՎԻ ԽՈՐՀՈՒՐԴ

1. Ումից է կազմված կոլլեկտիվի խորհուրդը և ինչու։

2. Ինչու կարիք չկա ստեղծել առանձին ողակավարական դպրոցներ։

3. Ինչպես են բաժանվում խորհրդի մեջ պարտականությունները և ինչու յե դա պետք, ինչպես է խորհուրդը ղեկավարում կոմխմբերին։

4. Վորտեղ և որվա ինչ ժամանակ պիտի հրավիրել խորհրդի հավաքույթ։

5. Ով է կազմում նոր և հին կոլլեկտիվներում աշխատանքի ծրագիրը և ողակների առաջադրումների ծրագիրը։

6. Ինչպես է կոլլեկտիվի խորհուրդում տարվում ողակավարների պատրաստությունը, իրենց ողակներում աշխատելու համար։

7. Խորհրդի հավաքույթին կարող են մասնակցել կողմնակի մարդիկ (պիոներները և մեծերը)։

8. Միջին հաշվով քանի ժամ պետք է տևի խորհուրդի հավաքույթը։

9. Ով է տանում խորհուրդի աշխատանքների հաշվեառումը և ինչպես։

10. Յերբ, ինչի մասին և ում առաջ է հաշվետվություն տալիս խորհուրդը, և ով է անում։

11. Ով է լուսաբանում կոլլեկտիվի պատի լրագրում խորհուրդի աշխատանքները և հաճախ է արվում այդ։

12. Կարող են խորհրդի կողմից արձակվել հրամաններ, կարգադրություններ, յերբ, ինչի մասին, ով է ստորագրում և վորտեղ են փակցնում։

13. Ինչումն է կայանում կոլվարի դերը կոլլեկտիվի խորհրդի հավաքույթում։

14. Ինչ է հարկավոր անել կոլլեկտիվի խորհրդի հավաքույթում։

## ՈՂԱԿԸ ՆՐԱ ԿՅԱՆՔԸ ՅԵՎ ՈՂԱԿԱՎԱՐԸ

1. Վորտեղ և որվա վոր ժամանակին է հարմար հրավիրել ողակի հավաքույթ։

2. Ինչպիսի մասեր են մտնում ողակի հավաքույթի ծրագրի մեջ և ինչու։

3. Ով է նախապատրաստում աշխատանքները ողակի հավաքույթի համար։

4. Ինչից սկսել ողակի հավաքույթը և ինչու։

5. Ով և ինչի մասին է անցկացնում զրույց ողակի հավաքույթում։

6. Ով է անցկացնում ողակի հավաքույթում, ֆիզ. պարապմունքը և ինչպես։

7. Ինչպես կապել ողակի աշխատանքները, պիոներական օրենքների և սովորությունների գործադրման հետ և ինչպես է ողակը հետևում դրանց գործադրման։

8. Ինչպես պետք է լուծել ողակի հավաքույթում. կարգապահության խնդիրները։

9. Հարկավոր է արդյոք բոլոր ողակներին տալ միատեսակ առաջադրումներ, կամ տարբեր, ինչու։

10. Հարկավոր է և ինչու ամրացնել ողակները խրճիթ-ընթերցարանին, կոոպերատիվին, գյուղխորհրդին և այլն։

11. Կարող է արդյոք ողակը ձեռնարկել ինքնուրույն մի որևէ աշխատանք, օրինակ խրճիթում, փողոցում, դպրոցում առանց կոլեկ-խորհրդի գիտության։

12. Կարող են կողմնակիները ներկա լինել ողակի հավաքույթին և ինչ կարող են նրանք անել։

13. Ինչպես պետք է ողակը ուժեղացնի կոլեկտիվի անկյունը։

14. Ինչ պետք է անեն ողակի հավաքույթում կըցված ընկերները, կուսբջիջի, կոմսոմոլի կողմից։

15. Ինչ պետք է անի ողակավարը ողակում, որպես կազմակերպիչ։

16. Ինչ պետք է անի ողակավարը պիոներների մեջ առաջացած կռիվների, խռովությունների և նման բաների դեպքում։

17. Հարկավոր է արդյոք ողակավարին ունենալ առանձին նշան դրոշակ և ինչպիսի։

18. Ինչ պետքե անի ողակի հավաքույթում կոլվարը։

19. Ինչպիսի նշանակություն ունի պիոներների աշխատանքները ողակներում։

## ԿՈԼԼԵԿՏԻՎԻ ՀԱՎԱՔՈՒՅԹ

1. Վորտեղ և որվա ինչպիսի ժամանակ է հարմար, անցկացնել կոլլեկտիվի հավաքույթը։

2. Ինչպիսի հիմնական մասեր են մտնում կոլլեկտիվի հավաքույթի ծրագրի մեջ։

3. Ովե կազմում կոլլեկտիվի հավաքույթի ծրագիրը և յերբ։

4. Ինչից սկսել կոլլեկտիվի հավաքույթը և ինչու։

5. Ինչով է տարբերվում կոլլեկտիվի հավաքույթը՝ խորհրդի և ոգակի հավաքույթներից։

6. Ով է ղեկավարում կոլլեկտիվի հավաքույթը։

7 Ով, և ինչի մասին է զրույց անցկացնում կոլլեկտիվի հավաքույթում։

8. Միջին հաշվով ինչքան ժամանակ պետք է տևի կոլլեկ. հավաքույթը։

9. Ինչպես կապել կոլլեկ. հավաքույթը հասարակական, շինարարական աշխատանքների և էկսկուրսիաների հետ։

10. Ինչ է հարկավոր անել կողմնակի անձանց, կոլլեկ. հավաքույթում։

11. Ինչպես է կոլլեկտիվի հավաքույթը լուծում կարգապահության խնդիրը։

## ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԿՈԼԼԵԿՏԻՎ

1. Ինչպիսի պայմաններ են հարկավոր, վորպեսզի կազմել կոլլեկտիվ։

2. Վորտեղից վերցնել կոմվար և ինչպիսի պահանջների պետքե բավարարի նա։

3. Ինչպիսի պատրաստություն է պետք և ինչ տանել պատանեկության մեջ կոլլեկտիվ կազմելիս։

4. Ինչպիսի նախապատրաստություն է պետք և ինչու տանել կոմյերիտ բջիջում։

5. Ինչով կարող է օգնել ուսուցիչը գյուղում կոլլեկտիվ կազմելիս։

6. Ինչպիսի նախապատրաստական աշխատանք պետք է տանել մեծերի (գյուղացիների) մեջ։

7. Հարկավոր են արդյոք ձեվականություններ (ցուցակագրում, անկետաներ լցնել և այլն) կոլլեկտիվում ընդունելու համար։

8. Կարելի յե միանգամից տանել պայքար կրոնամոլության դեմ։

9. Ինչով զբաղվել նոր կազմակերպված կոլլեկտիվում առաջին ամսում։

10. Յերբ է նպատակահարմար կազմել օղակներ. ինչու։

11. Յերբ է կարելի նոր կազմակերպված կոլլեկտիվին տալ վզկապ նշան և վորտեղից ճարել։

12. Յերբ և վոնց կատարել հանդիսավոր յերդումը։

13. Վորտեղից ճարել տնտեսական աղբյուրներ։

## ՀԱՇՎԵԱՌՈՒՄԸ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿՈԼԼԵԿՏԻՎՈՒՄ

1. Ինչու յե պետք օղակային հուշատետրը, ով է գրում հուշատետրում, ինչ է գրում և յերբ։

2. Ինչու յե պետք խորհրդի հուշատետրը, ով է տանում, ինչ և յերբ է գրում։

3. Ինչու յե պետք կոլլեկտիվի հուշատետրը, ով ե տանում, ինչ և յերբ ե գրում հուշատետրում։

4. Ինչի յե պետք կատարել հաշվեառում, պիոներների բացակայության և ներկայության, կոլլեկտիվի և ողակի հավաքույթներին։

5. Պետք ե արդյոք կոլվարը ունենա իրեն անձնական հուշատետրը և ինչ ե գրում այնտեղ։

6. Ինչի յե պետք հաշվետվություն տալ կոմյերիտ բջիջին, ինչքան ժամանակամիջոցում, ով ե տալիս հաշվետվությունը ինչու մասին գրել հաշվետվության մեջ։

7. Բացի այդ, հաշվեառման ինչ միջոցներ կարող եք նշել։

## ԿՈԼՎԱՐԸ ՅԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ

1. Ինչումն ե կայանում կոմյերիտականի հիմնական խնդիրը, վորպես կոլվարի։

2. Ինչ ե հարկավոր անել կոլվարին, վորպեսզի լինել պիոներների մեծ յեղբայրը և ընկերը։

3. Ինչ ե հարկավոր անել կոլվարին, վորպեսզի հանդիսանա պիոներներին որինակ։

4. Վորտեղ և ինչպես ե կոլվարը պատրաստվում կոլլեկտիվի հերթական հավաքույթներին։

5. Ինչպես ե կոլվարը լրացնում իրեն գիտական մակարդակը և ինչու յե դա պետք։

6. Վորոնք են այն դժվարությունները կոլվարի աշխատանքներում նոր և հին կոլլեկտիվում։

# ԳԱՎԲՅՈՒՐՈՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

1. Վորո՞նք են Գավբյուրոյի հիմնական խնդիրները։

2. Ո՞ւմից է կազմված Գավբյուրոն, ինչու, ով է նշանակում նրան, հարկավոր է մտցնել Գավբյուրոյի մեջ պիոներներին։

3. Ի՞նչպիսի աշխատանքի բաժանում է կատարվում Գավբյուրոյում։

4, Ի՞նչպես հաճախ է հրավիրվում Գավբյուրոյի նիստերը և ինչպիսի հարցեր է նա մշակում։

5. Յե՞րբ և ինչպիսի հարցեր է դրվում Լ.Կ.ՅԵ.Մ. Գավկոմի պլենումի նիստին։

6. Կարի՞ք կա արդյո՞ք Գաբյուրոյին կից ստեղծել զանազան կոմիսյաներ այս կամ այն աշխատանքների համար, յեթե այո, ինչպիսի կոմիսյաներ, ո՞ւմից և ի՞նչ պետք է անեն նրանք։

6. Հարկավոր է արդյոք դնել Լ.Կ.ՅԵ.Մ. գավառային համագումարներում պիոներ. աշխատանքների հարցերից։

7. Ո՞վ է կազմում ամեն մի ժամանակամիջոցում աշխատանքի ծրագիր, ինչից է կախված ծրագրի կազմելը, ծրագրի հիմնական մասերը։

8. Ի՞նչպես է Գավբյուրոն կանոնավորում պիոներական կազմակերպության աճումը գավառում։

9. Ինչպես է Գավբյուրոն պահպանում կապը շրջանների հետ—թվեք կոնկրետ կետերը, բոլոր միջոցները և ձևերը։

10. Ինչպիսի ճանապարհներով է Գավբյուրոն ղեկավարում կոլեկտիվների պատրաստման և վերապատրաստման գործը։

11. Հաճախ է հրավիրվում գավառական խորհրդակցություններ, նրանց կազմը, ինչպիսի խնդիրներ են դրվում։

12. Ինչպես է Գավբյուրոն օգտագործում տեղական թերթը։

13. Կարիք կա արդյոք Գավբյուրոյին հրատարակել առանձին գրականություն և ինչպիսին։

14. Ինչպես է Գավբյուրոն կապ պահպանում Կենտբյուրոյի հետ։